

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արտակ Դավթյանի, Կարինե Աճեմյանի և Մկրտիչ Մինասյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-1055-06.09.2016-ՊԻ-010/0) վերաբերյալ:

1. Նախագծի 1-ին հոդվածի՝

1) 1-ին մասով, ըստ էության, առաջարկվում է լրացումներ կատարել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածով նախատեսված՝ պատմության և մշակույթի հուշարձաններ ոչնչացնելու կամ վնասելու հանցակազմի առարկայում և օբյեկտիվ կողմում: Մասնավորապես, նախագծով առաջարկվում է նշված հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Պետության պահպանության տակ գտնվող պատմության, մշակույթի հուշարձանները, ինչպես նաև պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաները, արխիվային կամ այլ փաստաթղթերը ոչնչացնելը, վնասելը, կեղծելը կամ աղավաղելը»: Առաջարկը նպատակ ունի՝

ա. հողվածով պաշտպանվող առարկաների ցանկը լրացնել արխիվային փաստաթղթերով,

բ. ոտնձգության եղանակների շարքը լրացնել «կեղծելով» և «աղավաղելով»:

Առաջարկվող լրացումներից առաջինը պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող արխիվային փաստաթղթերը քրեաիրավական պաշտպանության վերցնելու նպատակի տեսանկյունից անհրաժեշտ չէ, քանի որ հանցակազմի գործող ձևակերպման պայմաններում էլ ցանկացած՝ այդ թվում արխիվային փաստաթուղթ, ենթակա է քրեաիրավական պաշտպանության, եթե ունի պատմական կամ մշակութային առանձնակի արժեք: Իսկ քրեաիրավական պաշտպանության օբյեկտները նման արժեք չներկայացնող փաստաթղթերով համալրելու համար անհրաժեշտ է ներկայացնել համակողմանի հիմնավորում, ինչը չի արվել նախագծի հեղինակների կողմից:

Ինչ վերաբերում է առաջարկվող 2-րդ լրացմանը, ապա Հրայր Աճառյանի՝ Ժամանակակից հայերենի բացատրական բառարանի համաձայն՝ աղավաղել նշանակում է՝ «1. Խեղաթյուրել, իրողությունը փոփոխված ներկայացնել, 2. բնական կերպն աղճատել, դեպի վատը փոփոխել, 3. բնագիրը սխալներով վերարտադրել, 4. փչացնել, խանգարել, կործանել»: Աղավաղել բառի՝ ներկայացված բացատրության համատեքստում պարզ չէ, իսկ նախագծի հեղինակների կողմից էլ չի հիմնավորվել, թե հանցագործության առարկաներն ինչ ձևերով կարող են աղավաղվել, որոնք չեն ընդգրկվի օրենքով սահմանված՝ վնասելու և ոչնչացնելու, եղանակների մեջ:

Բացի դրանից՝ աղավաղել հնարավոր է փաստաթղթի բովանդակությունը, այլ ոչ ինքը փաստաթուղթը: Ինչ վերաբերում է կեղծելուն, ապա փաստաթուղթը կեղծելն արդեն իսկ ընդգրկվում է այն վնասելու մեջ: Իսկ եթե նախագիծը նպատակ ունի քրեական պատասխանատվություն սահմանել պատմության, մշակույթի հուշարձաններ կամ պատմական, մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաներ կեղծելու համար, այդ առաջարկը հստակորեն հիմնավորված չէ.

2) 2-րդ մասով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի դիսպոզիցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Նույն արարքները, որոնք կատարվել են առանձնակի արժեք ունեցող օբյեկտների կամ հուշարձանների, կամ առանձնապես արժեքավոր արխիվային փաստաթղթի կամ Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգություն կամ հարստություն համարվող արժեքների (օբյեկտների, տեղեկությունների տվյալների) նկատմամբ»: Առաջարկվող լրացումը նպատակաուղղված է նշված հողվածով պաշտպանության

ենթակա առարկաների շրջանակն առանձնապես արժեքավոր արխիվային փաստաթղթերով, Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգություն կամ հարստություն համարվող արժեքներով (օբյեկտներ, տեղեկություններ, տվյալներ) ընդլայնելուն: Հաշվի առնելով, որ առանձնապես արժեքավոր արխիվային փաստաթուղթը կամ Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգություն կամ հարստություն համարվող արժեքներն ինքնին առանձնակի արժեք ունեցող օբյեկտներ են, հետևաբար, առաջարկվող լրացումն անհրաժեշտ չէ: Քննարկվող հանցակազմի՝ մատնանշված առարկաների նույնական լինելու մասին է վկայում նաև այն, որ նախագծով առաջարկվող լրացման մեջ ևս «մշակութային ժառանգություն կամ հարստություն համարվող արժեքներ» արտահայտությունը բացատրվում է այդ թվում «օբյեկտ» բառով:

2. Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Պաշտոնատար անձի կողմից շահադիտական նպատակով կամ անձնական այլ դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ պաշտոնական, արխիվային և փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ մտցնելը, կեղծում, քերվածք կամ այլ թվական գրառումներ կամ փոփոխություններ կատարելը, կեղծ փաստաթղթեր կամ տեղեկություններ (տվյալներ) կազմելը կամ հանձնելը, ինչպես նաև տվյալներն աղավաղելը կամ առանց հիմնավոր փաստերի հրապարակելը»: Առաջարկվող լրացումը նպատակ ունի արխիվային փաստաթղթերը ներառել խնդրո առարկա հանցակազմում, իսկ իբրև հանցակազմի օբյեկտիվ կողմի եղանակ՝ նախատեսել նաև տվյալներն աղավաղելը կամ առանց հիմնավոր փաստերի հրապարակելը: Առաջին լրացման առնչությամբ հարկ է նշել, որ պաշտոնական կեղծիքը պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություն է, և դրանով պայմանավորված՝ դրա առարկան պաշտոնական փաստաթղթերն են: Այս համատեքստում այն արխիվային փաստաթղթերը, որոնք նաև պաշտոնական են, գործող ձևակերպման պայմաններում արդեն իսկ պաշտպանվում են քննարկվող հոդվածով: Իսկ ինչ վերաբերում է պաշտոնական փաստաթուղթ չհամարվող արխիվային փաստաթղթերին, ապա դրանք քննարկվող հանցակազմի օբյեկտով պայմանավորված՝ չեն կարող համարվել պաշտոնական կեղծիքի առարկա: Անդրադառնալով օբյեկտիվ կողմում «աղավաղել» եղանակն ավելացնելու առաջարկին՝ պետք է նշել, որ դրան ևս վերաբերելի են եզրակացության 1-ին կետում համանման առաջարկի վերաբերյալ արված դիտարկումները:

Ինչ վերաբերում է քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը «առանց հիմնավոր փաստերի հրապարակել» եղանակով համալրելու առաջարկին, ապա անհրաժեշտ է հաշվի առնել, որ հրապարակումը պաշտոնական կեղծիքի հատկանիշ չէ և չի տեղավորվում այդ հանցակազմի բովանդակության մեջ: Հետևաբար, նման արարքի համար քրեական պատասխանատվություն չի կարող նախատեսվել խնդրո առարկա հոդվածով:

Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N ՆԿ-96-Ա կարգադրության 2-րդ կետով հաստատված Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումներով նախատեսվել և աշխատանքային խմբի կողմից մշակվել է Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի նախագիծ, որն առաջիկայում կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը: Ուստի առաջարկում ենք ներկայացված նախագիծը քննարկել նշված նախագծի հայեցակարգային մոտեցումների շրջանակներում:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված նախագծի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից գեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով նախատեսվում է պետության պահպանության տակ գտնվող պատմության, մշակույթի հուշարձանները, ինչպես նաև պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաները, արխիվային կամ այլ փաստաթղթերը ոչնչացնելը, վնասելը, կեղծելը կամ աղավաղելը դարձնել քրեորեն պատժելի:

Նախագծի ընդունման և կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա **նախատեսվում է չեզոք ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգություն և հարստություն համարվող արժեքները, ինչպես նաև առանձնապես արժեքավոր արխիվային փաստաթղթերը ոչնչացնելը, վնասելը, կեղծելը կամ աղավաղելը համարել քրեորեն պատժելի:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքներն՝ արձանագրվել է Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ՀԱԿԱԿՈՌՈՒԴՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում
կարգավորման

- 1 «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:
Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»
ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման
վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կարող է ունենալ դրական ազդեցություն, իսկ ՀՀ համայնքների բյուջեների եկամուտների վրա, ինչպես նաև ՀՀ պետական և համայնքների բյուջեների ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

Պ-1055-06.09.2016-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի Քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 264-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 264. Պատմության և մշակույթի հուշարձաններ ոչնչացնելը կամ վնասելը

1. Պետության պահպանության տակ գտնվող պատմության, մշակույթի հուշարձանները, ինչպես նաև պատմական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկաները, **արխիվային կամ այլ փաստաթղթերը ոչնչացնելը, վնասելը, կեղծելը կամ աղավաղելը՝** պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

2. Նույն արարքները, որոնք կատարվել են առանձնակի արժեք ունեցող օբյեկտների կամ հուշարձանների, **կամ առանձնապես արժեքավոր արխիվային փաստաթղթի կամ Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգություն կամ հարսություն համարվող արժեքների (օբյեկտների, տեղեկությունների փվյալների) նկատմամբ՝**

պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Պաշտոնատար անձի կողմից շահադիտական նպատակով կամ անձնական այլ դրդումներով կամ խմբային շահերից ելնելով՝ պաշտոնական, **արխիվային** և փաստաթղթերում ակնհայտ կեղծ տեղեկություններ կամ գրառումներ մտցնելը, կեղծում, քերվածք կամ այլ թվական գրառումներ կամ փոփոխություններ կատարելը, կեղծ փաստաթղթեր կամ տեղեկություններ (տվյալներ) կազմելը կամ հանձնելը, **ինչպես նաև փվյալները աղավաղելը կամ առանց հիմնավոր փաստերի հրապարակելը՝**»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդը օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ
ՆԱԽԱԳԻԾԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն ընդունելու անհրաժեշտությունը պայմանավորված է հայ և համաշխարհային պատմամշակութային ժառանգության պահպանման, դրանք առանց կեղծիքների ու ավաղավումների տարածման, օգտագործման, ինչպես նաև տեղեկատվական ժառանգականությունը սերունդներին անվնաս փոխանցելու պարտավորությամբ:

Օրենսդրական նախաձեռնության համար հիմք է հանդիսացել ՄԱԿ-ի «Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին» կոնվենցիայի դրույթներն առավել արդյունավետությամբ կիրառելու, ինչպես նաև նյութական և ոչ նյութական մշակութային արժեքների նկատմամբ օրենսդրությամբ սահմանված, սակայն դեռևս չկարգավորված վերահսկողության ու պատժելիության հիմքերը սահմանելու նախապայմանը:

Մասնավորապես, համաձայն ՀՀ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի՝ «Մշակութային օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվություն սահմանվում է օրենքով սահմանված կարգով:»,

«Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» օրենքի պահանջները խախտողները Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կրում են պատասխանատվություն:»,

Իսկ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով՝ «Իրավաբանական և ֆիզիկական անձինք արխիվային գործի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը խախտելու համար կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն:»: Սակայն նշված դրույթներից բխող օրենսդրական կարգավորումները կամ չեն սահմանված կամ բավարար չեն ՀՀ մշակութային ժառանգություն և հարստություն համարվող արժեքները ոչնչացումից, աղավաղումից, կեղծումներից պաշտպանելու համար:

Օրենսդրական նախաձեռնությունը քրեորեն պատժելի է դարձնում արխիվային նյութերի կեղծարարությունը, հորինված մեկնաբանությունները և փաստերի աղավաղումը, որը կարող է կանխել և վերահսկելի դարձնել պաշտոնական, տեղեկատվական, մշակութային և գիտական շրջանակներում նման դրսևորումները:

Նախագծում կարևորվել և քրեորեն պատժելի են համարվել.

1) **առանձնապես արժեքավոր արխիվային փաստաթղթերը**¹, որոնք համարվում են պատմամշակութային կամ գիտական արժեք, պետության և հասարակության համար հատուկ կարևորություն ունեցող արխիվային փաստաթղթերը, որոնց համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է հաշվառման, պահպանության և օգտագործման հատուկ պայմաններ,

2) **Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգություն**² համարվող արժեքները, ինչպիսիք համարվում են "անցյալում ստեղծված մշակութային արժեքների ամբողջությունը, որը Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի մշակութային ինքնության պահպանման ու զարգացման, համաշխարհային քաղաքակրթության մեջ ներդրման համար հնագիտական, ճարտարապետական, պատմական, գեղագիտական կամ սոցիալ-մշակութային հայեցակետից ունի կարևոր նշանակություն.

3) **Հայաստանի Հանրապետության մշակութային հարստություն**³ համարվող արժեքները, որը մշակութային արժեքների ամբողջություն է (այդ թվում՝ մշակութային ժառանգության օբյեկտներ) և հայ ժողովրդի համար ունի ազգային նշանակություն.

Օրենքի նախագծի մշակման ընթացքում հեղինակային խումբը ոչ միայն ուսումնասիրել է առկա օրենսդրական դաշտը և միջազգային կարգավորումները, այլ խորհրդակցել են իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Դանիելյանի և ՀՀ ԱԺ պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի մասնագետների հետ:

¹ Տես «Արխիվային գործի մասին» օրենք, հոդված 3-րդ, կետ 6-րդ

² Տես Մշակութային օրենսդրության հիմունքների մասին օրենք, հոդված 6, 1-ին մաս, պարբ. 9-րդ, ինչպես

նան Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ՀՀ օրենք հոդված 3-րդ, կետ 1-ին
³ Տես Մշակութային օրենսդրության հիմունքների մասին օրենք, հոդված 6, 1-ին մաս,
պարբ. 10-րդ__